ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԳՈՌ ՎԱՉԱԳԱՆԻ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԺԲ.00.02 – «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

НИКОГОСЯН ГОР ВАЧАГАНОВИЧ

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО СТАТУСА БЕЖЕНЦЕВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02. «Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление»

Ереван-2014

Ատենախոսության թեման հաստատվել է
ՀՀ պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Վ. Ստեփանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Հ. Երիցյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Է. Է. Շաթիրյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2014 թ.-ի մարտի 14-ին՝ ժամը 13^{00}-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1)։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում։

Սեղմագիրն առաքվել է 2014 թ.-ի փետրվարի 12-ին։

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Академии Государственного Управления РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор В. В. Степанян

Официальные опоненты: доктор юридических наук А. Г. Ерицян

кандидат юридических наук, доцент Э.Э. Шатирян

Ведущая организация: Центр Конституционного права РА

Защита состоится 14 матра 2014 г., в 13^{00} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 12 февраля 2014 г.

Ученный секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент В. Д. Аветисян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Քաղաքացիության կամ մշտական բնակության երկիրը հարկադրաբար լքած և բնակության նոր վայր փնտրող անձանց հիմնահարցն եղել և մնում է պետությունների հոգածության առարկան և արդյունավետ լուծում պահանջող խնդիրներից մեկը:

Պատշաճ կերպով չկարգավորված փախստականների միգրացիան կարող է ոչ միայն բացասական ազդեցություն ունենալ մի շարք երկրների ներքաղաքական վիճակի վրա՝ հասցնելով անկանխատեսելի սոցիալական հետևանքների, այլև առաջ բերել բարդություններ միջպետական հարաբերություններում:

Միջազգային հանրությունը մեծ ջանքեր է գործադրում ինչպես փախստականների կարգավիճակի խնդիրները լուծելու ուղղությամբ՝ միջազգային և տարածաշրջանային համաձայնագրեր մշակելով, փախստականների պաշտպանության մեխանիզմների ստեղծմամբ, ազգային օրենսդրության կատարելագործմամբ և այլն, այնպես էլ փախստականների թիվը պակասեցնելու ուղղությամբ: Չնայած գործադրվելիք միջոցներին՝ փախստականների թիվը գնալով ավելանում է (ներկայումս աշխարհում՝ ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի տվյալներով[1], կան մոտ 16 միլիոն փախստականներ, որոնցից միայն 11 միլիոնն են ընկնում իր մանդատի տակ): Այս փաստն առաջացնում է նոր խնդիրներ, որոնք ենթադրում են ինչպես այդ խնդիրների տեսական, գիտական ուսումնասիրություն, այնպես էլ օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն:

Խորհրդային Միության փլուզումից հետո փախստականությունն իրեն ավելի ցավոտ կերպով զգացնել է տալիս հատկապես Խորհրդային Միության տարածքում ձևավորված նորանկախ հանրապետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում:

Թեմայի արդիականությունը՝ հատկապես Հայաստանի Հանրապետության համար, պայմանավորված է նրանով, որ 1988-1992 թվականներին միջէթնիկական հակասությունների սրման և ազգամիջյան բախումների հետևանքով Ադրբեջանից բռնագաղթեցին և Հայաստանի Հանրապետությունում ապաստանեցին մոտ 300.000 փախստականներ: Վերջիններիս առկայությունը լրացուցիչ խնդիրներ առաջ բերեց երկրի համար, մանավանդ եթե հաշվի առնենք, որ առանց այդ էլ հանրապետությունում տիրում էր լարված սոցիալ-քաղաքական իրավիճակ: Ինչպես նշվում է ՄԱԿ-ի

[1] www.unhcr.ru

2009 թվականի մարդկային զարգացման ազգային զեկույցում՝ փախստականների այդ մեծաքանակ հոսքերի մեջ ներքաշված անձանց մեծ մասը հետագայում համալրեցին Հայաստանի բնակչության՝ աղքատության նկատմամբ առավել զգայուն սոցիալական խմբերի շարքը, որոնց հիմնական մասի իրական տնտեսական հնարավորությունները խիստ ցածր էին հանրապետության բնակչության միջին մակարդակից:[2]

Թեմայի արդիականության մասին է վկայում նաև այն, որ Սիրիայում տեղի ունեցած և դեռևս շարունակվող իրադարձությունները հարկադրեցին այդ երկիրը լքել նաև մեր հայրենակիցներից շատերին, որոնցից մոտ տաս հազարը, ժամանելով Հայաստանի Հանրապետություն, կանգնեցին մի շարք խնդիրների առջև՝ բնակարանների վարձերը վճարելու անկարողություն, կեցության, կրթության հետ կապված հարցեր և այլն:

Փախստականների մեծ մասն այն ժամանակ, իսկ մի մասը նաև մինչև հիմա, ունի բնակարանային հիմնախնդիր, սոցիալ-տնտեսական այլ խնդիրներ (ցածր եկամուտներ, գործազրկության բարձր աստիճան և այլն), իրենց իրավունքների մասին տեղեկացվածության ցածր աստիճան, ուստի նաև իրավական ցածր պաշտպանվածություն, ինչպես նաև սոցիալական կապերի չզարգացածություն և այլն:

Փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի ամրագրումը և նրանց փաստացի վիճակի բարելավումը պահանջում է մի շարք տեսական խնդիրների հստակ ձևակերպում և լուծում, մասնավորապես լրացման և վերըմբռնման կարիք ունեն փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը և բովանդակությունը:

Կարևոր է ոչ միայն ամրագրել փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակը, այլև մշակել հստակ և գործող մեխանիզմներ՝ փախստականների իրավունքների իրագործման և պաշտպանության համար:

Վերոգրյալով է պայմանավորված թեմայի ընտրությունը և արդիականությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են հանդիսանում փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

Հետազոտության առարկան են կազմում փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակին վերաբերող միջազգային և ներպետական իրավական նորմերի ամբողջությունը, ինչպես նաև

[2] Տե՛ս ՄԱԿ-ի Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2009 թվական, էջ 60 (www.undp.org):

փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային և հայրենական մեխանիզմները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է համակողմանի ուսումնասիրել միջազգային և հայրենական իրավունքում փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակն ամրագրող նորմերը՝ վեր հանել առկա հակասությունները, անորոշությունները, բացերը և մշակել դրանց լուծման տարբերակներ:

Նշված նպատակներին հասնելու համար ատենախոսն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

1) ուսումնասիրել «փախստական» հասկացության սահմանման վերաբերյալ միջազգային իրավունքում առկա մոտեցումները,

2) վերլուծել փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակը, նրա սկզբունքները,

3) Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական նորմերին համապատասխան դիտարկել փախստականների իրավունքների և պարտականությունների ծավալը,

4) բացահայտել միջազգային մեխանիզմների և Հայաստանի Հանրապետության դատարանների դերը փախստականների իրավունքների պաշտպանության գործում,

5) վերլուծել փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչման և դադարեցման հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, և բացահայտել միջազգային չափանիշներին դրանց համապատասխանության հարցը,

6) ձևակերպել առաջարկություններ՝ ուղղված փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակն ամրագրող օրենսդրության փոփոխությանն ու լրացմանը, դրա կիրառման պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության տեսական հիմքը: Հայաստանի Հանրապետությունում փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները բավարար չափով համակողմանի վերլուծության չեն ենթարկվել, ուստի դրանց վերաբերյալ գիտական աղբյուրները սակավաթիվ են:

Որպես ատենախոսության տեսական հիմք ծառայել են արտասահմանյան հեղինակներից Ա. Ավանեսովայի, Լ. Անդրիչենկոյի, Ռ. Իսկենդերովի, Վ. Պոտապովի, Օ. Իվանովի, Տ. Ռեգենտի, Ե. Բելոուսովայի, Ն. Նովիկովայի, Ա. Սելիվանովի, Յու. Սարաշևսկիի, Տ. Տիտովի, Գ. Գուդվին-Գիլի, Դ. Հաթուեյի և մյուսների աշխատությունները, իսկ հայրենական հեղինակներից՝ Գ.

Ավագյանի, Վ. Այվազյանի, Ս. Մինասյանի, Մ. Աղաջանյանի, Է. Ասատրյանի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքը կազմել են ՀՀ Սահմանադրությունը, 1920-1940 թվականների միջև ընկած ժամանակահատվածում փախստականների վերաբերյալ ընդունված կոնվենցիաները և համաձայնագրերը, «Փախստականների իրավական կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիան և 1967 թվականի Արձանագրությունը, փախստականների կարգավիճակին նվիրված տարածաշրջանային փաստաթղթերից՝ Աֆրիկյան միասնության կազմակերպության 1969 թվականի Կոնվենցիան, 1984 թվականի Կարտահենյան հռչակագիրը և «Փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին օգնության մասին» 1993 թվականի ԱՊՀ համաձայնագիրը, «Մարդու իրավունքների միջազգային բիլլը», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան, ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված միջազգային փաստաթղթերում ամրագրված նորմերը, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքը, «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքը և հայրենական այլ օրենքներ, ՀՀ կառավարության առանձին որոշումները, ինչպես նաև որոշ երկրների փախստականների մասին օրենքները:

Հետազոտության փորձառական հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ վճռաբեկ դատարանի և այլ ատյանների դատարանների դատական ակտերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերը, Կանադայի Գերագույն դատարանի պարզաբանումները:

Ատենախոսությունը գրելիս հեղինակի կողմից ուսումնասիրվել են փախստականների մասնակցությամբ ավելի քան վաթսուն վարչական գործեր:

Ատենախոսությունում օգտագործվել են ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից հրապարակված տվյալները և հրատարակված ձեռնարկները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում հեղինակի կողմից օգտագործվել են գիտական ուսումնասիրության ընդհանուր և հատուկ մեթոդներ, այդ թվում՝ դիալեկտիկական, պատմական, վերլուծական, վիճակագրական, համակարգային-կառուցվածքային, իրավահամեմատական և այլն: Մասնավորապես, իրավահամեմատական մեթոդի օգնությամբ վերլուծվել են փախստականների սահմանադրահիրավական կարգավիճակին վերաբերող միջազգային և

ներպետական նորմերը, վեր են հանվել դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

Հետազոտության գիտական նորույթն այն է, որ ատենախոսությամբ առաջին անգամ համալիր կերպով ուսումնասիրվում են փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները, նրանց իրավունքների պաշտպանության մեխանիզմներն ինչպես միջազգային իրավունքում, այնպես էլ հայրենական օրենսդրության մեջ:

Ատենախոսն ուսումնասիրելով փախստականների կարգավիճակին վերաբերող միջազգային և ներպետական նորմերը և դրանց պրակտիկայում կիրառելիությունը՝ մշակել և ներկայացրել է տեսական և գործնական առաջարկներ, որոնք կարող են էական նշանակություն ունենալ օրենսդրական բարեփոխումների և փախստականների իրավունքների պաշտպանության համար:

Պաշտպանության ներկայացվող դրույթները: Հետազոտության նպատակների և խնդիրների իրականացման արդյունքում ձևավորված գիտական եզրահանգումների հիման վրա պաշտպանության ներկայացվող դրույթները հետևյալներն են.

1. Իրավաբանական գրականության մեջ փորձ է կատարվել փուլերի բաժանել փախստականներին վերաբերող օրենսդրության զարգացման գործընթացը:[3] Հեղինակի կարծիքով արտահայտված տեսակետն ամբողջությամբ չի արտացոլում պատմական իրողությունը: Ուստի հեղինակը փորձ է արել յուրովի ներկայացնել փախստականներին վերաբերող օրենսդրության զարգացման գործընթացը՝ այն բաժանելով հետևյալ չորս փուլերի.

1) Առաջին փուլ –1920-1939թթ.՝ կայացման շրջան, որտեղ ձևավորվել են հիմնական հասկացությունները և սկզբունքները:

2) Երկրորդ փուլ – 1939-1951թթ.՝ զարգացման շրջան, որը համընկավ Երկրորդ աշխարհամարտի սկզբի հետ և ավարտվեց ներկայումս փախստականների կարգավիճակին վերաբերող հիմնական միջազգային ակտի՝ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի,[4] ընդունմամբ: Այս շրջանում ձևավորվեցին նաև Միացյալ ազգերի կազմակերպությունը և ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը:

---

[3] Տե՛ս Аванесова А. А., Конституционно-правовой статус беженцев и вынужденных переселенцев и проблемы его реализации в субъектах РФ, расположенных на территории Южного федерального округа, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Ставрополь, 2008, էջ 17:

[4] ՄՊՀՀՊՏ 2008/Հատուկ թողարկում

3) Երրորդ փուլ – 1951-1967թթ.՝ հստակեցման շրջան: «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում տրված «փախստական» հասկացության սահմանումն ուներ երկու սահմանափակում (ժամանակային և աշխարհագրական): Արդյունքում՝ նշված կոնվենցիայի գործողության ոլորտ չընկան միլիոնավոր փախստականներ: Այդ խնդիրը լուծելու համար 1967 թվականին ընդունվեց փախստականների կարգավիճակին վերաբերող Արձանագրությունը:[5] 1967 թվականի Արձանագրությանը միանալով պետությունները պարտավորություն են ստանձնել կիրառել «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի հիմնարար դրույթները նրանում տրված սահմանմանը համաձայն, բայց արդեն առանց «1951 թվականի հունվարի 1» ամսաթվի և աշխարհագրական սահմանափակման:

4) Չորրորդ փուլ – 1968 թվականից - առ այսօր՝ ժամանակակից շրջան, որը բնութագրվում է փախստականներին վերաբերող օրենսդրության մեջ իրականացվող մշտական փոփոխություններով և լրացումներով:

2. Տարածաշրջանային փաստաթղթերում սահմանված «փախստական» հասկացության սահմանումները պարունակում են ինչպես «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում և 1967 թվականի Արձանագրության մեջ ամրագրված՝ անձին փախստական ճանաչելու չափանիշները, այնպես էլ լրացուցիչ չափանիշներ: Ատենախոսը հիմնավորել է, որ անհրաժեշտ է միավորել «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում և 1967 թվականի Արձանագրության մեջ, Աֆրիկյան միասնության կազմակերպության 1969 թվականի Կոնվենցիայում[6], 1984 թվականի Կարտախենյան հռչակագրում[7] և «Փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին օգնության մասին» 1993 թվականի ԱՊՀ համաձայնագրում[8] տրված «փախստական» հասկացության սահմանումները, և որպես նոր սահմանում այն կիրառել միջազգային և ազգային իրավունքում: Ատենախոսության մեջ առաջարկվում է «փախստական» հասկացության հետևյալ սահմանումը.

«Փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, ով զինված ազգամիջյան հակամարտությունների, համատարած բռնության, արտաքին հարձակման, բռնազավթման, օտար բռնատիրության, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների

[5] ՀՀՊՏ 1997/29

[6] unhcr.org.ua/img/uploads/docs/1969%20Convention.pdf

[7] www.unhcr.ru/doc/1984-kartah.doc

[8] ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3 (11)

կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների արդյունքում կամ, ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելու, քաղաքական կարծիքի համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նման երկյուղի կամ վերը նշված պատճառներից որևէ մեկի հետևանքով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից կամ նա, ով չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ նման երկյուղի կամ վերը նշված պատճառներից որևէ մեկի հետևանքով չի ցանկանում վերադառնալ այնտեղ»:

3. Հեղինակը հիմնավորել է, որ փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակն ունի բարդ կառուցվածք և առանձնացրել է նրա հետևյալ բաղադրատարրերը՝ իրավունքները, դրանց իրականացման երաշխիքները, ինչպես նաև պարտականությունները և պատասխանատվությունը:

Փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակը դա այն օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի իրավունքների ու պարտականությունների համակցությունն է, ով հեղինակի կողմից առաջարկվելիք «փախստական» հասկացության սահմանման մեջ նշված պատճառներից որևէ մեկի հետևանքով լքելով իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը և գալով Հայաստանի Հանրապետություն՝ ճանաչվել է փախստական և ստացել ապաստան: Փախստականների իրավունքների իրականացման երաշխիքներն են՝ պաշտպանությունը վտարվելուց, ապօրինի մուտքի կամ ենթադրյալ ապաստանի երկրում ապօրինի մնալու կապակցությամբ անպատժելիությունը, ընտանիքի միավորումը, ինչպես նաև դատական պաշտպանության և պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները, իսկ պատասխանատվությունը՝ կատարված իրավախախտման համար օրենքով սահմանված պետական հարկադրանքի միջոցների կիրառումն է:

4. Հաշվի առնելով փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով պետք է սահմանել, որ փախստականներին, որպես առավել խոցելի խմբի, բոլոր դեպքերում պետք է հնարավորություն տրվի մասնակցել իրենց սահմանադրաիրավական կարգավիճակը դադարեցնելու համար հարուցված վարչական վարույթին և իրականացնել լսված լինելու իրենց իրավունքը՝ անկախ վարչական վարույթի

հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածի տևողությունից:

5. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ ՀՀ ոստիկանությունը, փախստականի դիմումի հիման վրա, երկարաձգում է կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը միայն այն դեպքում, երբ այդ ժամկետը սպառվել է: Հեղինակի կարծիքով անհրաժեշտ է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածը լրացնել նորմով, ըստ որի փախստականներին, առանձին դեպքերում, հնարավորություն կտրվի կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը երկարաձգելու մասին դիմումը ներկայացնել մինչ այդ փաստաթղթի ժամկետի սպառվելը, որպեսզի անհարկի չսահմանափակվեն նրանց իրավունքները:

6. Հեղինակը, վերլուծելով «Փախստականների և ապաստանի մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքները, առաջարկել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում որպես ապաստանի տրամադրման ընթացակարգի ժամկետ սահմանել «ողջամիտ ժամկետը»: Նման պայմաններում իրավասու մարմինները չեն ընկնի ժամկետային շրջանակների մեջ, և պայմանավորված կոնկրետ գործի առանձնահատկություններով, կկիրառեն ապաստանի տրամադրման ընթացակարգի անհրաժեշտ համապատասխան կարճ կամ երկար ժամկետներ:

Միաժամանակ առաջարկվել է օրենքով սահմանել, որ ապաստանի տրամադրման ընթացակարգի «ողջամիտ ժամկետի» խախտման փաստը հաստատվելու դեպքում անձը դատական կարգով կճանաչվի փախստական և նրան կտրամադրվի ապաստան Հայաստանի Հանրապետությունում:

7. Փախստականների դատական պաշտպանության իրավունքն արդյունավետ դարձնելու համար առաջարկվել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել փաստաբանի պարտադիր մասնակցությունը վարչական դատարանում գործի քննությանը, եթե այնտեղ որպես կողմ հանդես են գալիս ապաստան հայցողները կամ փախստականները:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսական աշխատանքի տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ տարանջատվել և վերլուծության են ենթարկվել փախստականներին վերաբերող օրենսդրության զարգացման գործընթացի հիմնական փուլերը, համակողմանի վերլուծվել են տարբեր ժամանակաշրջաններում ընդունված միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերում առկա «փախստական»

հասկացության սահմանումները, ինչպես նաև փորձ է կատարվել ներկայացնել «փախստական» հասկացության նոր սահմանում: Ուսումնասիրվել են նաև փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակը, նրա սկզբունքները, փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական մեխանիզմները: Բացի այդ, դիտարկվել է Հայաստանի Հանրապետությունում փախստականների իրավունքների և պարտականությունների ծավալը, փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչման և դադարեցման հիմքերը և դրանց առնչվող այլ հարցեր:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև «Սահմանադրական իրավունք» և «Մարդու իրավունքներ» առարկաներից դասախոսություններ և գործնական պարապմունքներ անցկացնելիս:

Գործնական առումով ատենախոսական աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակը կատարելագործելու համար: Այս կապակցությամբ ատենախոսության մեջ ներկայացվել են «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկներ:

Ատենախոսությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել ինչպես փախստականների և ապաստան հայցողների հետ առնչվող իրավասու տարբեր մարմինների աշխատողների համար, այնպես էլ հենց փախստականների և ապաստան հայցողների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Իրավագիտության» ամբիոնի նիստերում: Ատենախոսության թեմայով հեղինակի կողմից տպագրվել են թվով չորս գիտական հոդվածներ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնք պարունակում են վեց պարագրաֆներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, բացահայտված է աշխատության գիտական նորույթը, ցույց են տրված հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, մեթոդաբանական հիմքը և տեսական բազան: Թվով 7 կետերում ձևակերպված են պաշտպանության ներկայացվող դրույթները, ներկայացված են

հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ինչպես նաև՝ շարադրված է ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին գլուխը, որի վերտառությունն է «Փախստականների կարգավիճակի ձևավորումը, զարգացումը և սկզբունքները», բաղկացած է երկու պարագրաֆից:

Գլխի առաջին՝ «Փախստականների կարգավիճակի ձևավորումը և զարգացումը» պարագրաֆում, ուսումնասիրվել են փախստականներին վերաբերող միջազգային, տարածաշրջանային իրավական ակտերը: Հեղինակի կողմից դիտարկվել են փախստականների կարգավիճակի ձևավորման և զարգացման ընթացքը, փախստական հասկացության էվոլյուցիոն զարգացումը:

Ատենախոսը փորձ է արել յուրովի ներկայացնել փախստականներին վերաբերող օրենսդրության զարգացման գործընթացը՝ այն բաժանելով չորս փուլերի, որոնք իրենց արտացոլումն են գտել «Պաշտպանության ներկայացվող դրույթներից» առաջինում:

Հեղինակը հետազոտել է նաև «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում և 1967 թվականի Արձանագրության մեջ տրված այն երեք օբյեկտիվ չափանիշները, որոնք սահմանում են «փախստական» հասկացությունը: Դրանք են՝

1) քաղաքացիության (ծագման կամ նախկին մշտական բնակության) երկրից դուրս գտնվելը,

2) հետապնդումների զոհ դառնալու հիմնավորված երկյուղ՝ կապված ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի հետ,

3) նշված երկյուղների պատճառով քաղաքացիության երկրի պաշտպանությունից օգտվելու հնարավորության կամ ցանկության բացակայությունը, իսկ քաղաքացիություն չունեցող անձանց պարագայում՝ ծագման կամ նախկին մշտական բնակության երկիր վերադառնալու հնարավորության կամ ցանկության բացակայությունը:

Բացի այդ, ատենախոսն արձանագրել է, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական մակարդակներում «փախստական» հասկացության սահմանման պարբերաբար փոփոխվելու փաստն ունի և՝ դրական, և՝ բացասական կողմեր:

Դրական կողմն այն է, որ պետությունները ձգտում են կատարելագործել փախստականներին վերաբերող օրենսդրությունները, քանի որ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիան

ընդունելուց հետո անցել է ավելի քան վաթսուն տարի, որի արդյունքում իրավիճակը փոխվել է:

Բացասական կողմն արտահայտվում է նրանում, որ «փախստական» հասկացության համընդհանուր սահմանման բացակայությունը հանգեցնում է նրան, որ փախստականների որոշ կատեգորիաներ չեն ընդգրկվում «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի գործողության շրջանակներում և զրկված են իրավական պաշտպանությունից: Բացի այդ, անձանց որոշ կատեգորիաներ, որոնք չեն համապատասխանում միջազգային փաստաթղթերում տրված չափանիշներին ներառվում են «փախստական» հասկացության մեջ:

Հետևաբար, անհրաժեշտ է մշակել և ընդունել նոր, ունիվերսալ միջազգային համաձայնագիր, որը կպարունակի փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակի բոլոր կողմերը՝ հաշվի առնելով ապաստան հայցող անձանց նոր կատեգորիաները:

Այս կապակցությամբ հեղինակն առաջարկել է միավորել «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում և 1967 թվականի Արձանագրության մեջ, Աֆրիկյան միասնության կազմակերպության 1969 թվականի Կոնվենցիայում, 1984 թվականի Կարտախենյան հռչակագրում և «Փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին օգնության մասին» 1993 թվականի ԱՊՀ համաձայնագրում տրված «փախստական» հասկացության սահմանումները: Դրա հիման վրա սահմանել նոր սահմանում՝ այն կիրառելով միջազգային և ազգային իրավունքում: Այդ նոր սահմանումը ներկայացվել է «Պաշտպանության ներկայացվող դրույթներից» երկրորդում:

Գլխի երկրորդ՝ «Փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի սկզբունքները» պարագրաֆում դիտարկվում են այն ղեկավար դրույթները, հիմնական կանոնները, որոնցով պետք է առաջնորդվեն պետությունները՝ փախստականների պաշտպանությունն իրականացնելիս:

Հեղինակն արձանագրել է, որ փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի վրա տարածվում են ինչպես մարդու իրավունքների ոլորտում գործող ընդհանուր սկզբունքները (համընդհանրությունը և ունիվերսալությունը, անօտարելիությունը, անբաժանելիությունը և փոխադարձ կախվածությունը, իրավահավասարությունը և խտրականության անթույլատրելիությունը), այնպես էլ միայն փախստականների նկատմամբ կիրառվող հատուկ սկզբունքները:

Փախստականներին վերաբերող հանրաճանաչ սկզբունքներից առաջնակարգ նշանակություն ունի «չվտարման» սկզբունքը: Այս սկզբունքի առնչությամբ ընդունված համապատասխան միջազգային ակտերի ուսումնասիրության արդյունքում հեղինակն եկել է այն եզրակացության, որ ներկայումս «չվտարման» սկզբունքը սկսում է գործել այն պահից, երբ ապաստան հայցող անձինք խնդրում են ապաստանի երկիր մուտք գործելու թույլտվություն: Ընդ որում, ապաստան հայցողի իրավական կամ միգրացիոն կարգավիճակը վճռորոշ նշանակություն չունի, այսինքն՝ չվտարման սկզբունքը կիրառելու համար կարևոր չէ, թե անձն ինչպես է հայտնվել այն տարածքում, որի վրա տարածվում է պետության իրավասությունը:

Պետությունները կարող են վտարել իրենց տարածքում գտնվող փախստականին միայն բացառիկ դեպքերում, եթե դա անհրաժեշտ է ազգային անվտանգության կամ հասարակական կարգի պահպանության համար:

Չվտարման սկզբունքից բխում է մյուս հատուկ սկզբունքը, այն է՝ անձանց անպատժելիությունը ապօրինի մուտքի կամ ենթադրյալ ապաստանի երկրում ապօրինի մնալու կապակցությամբ:

Ատենախոսի կողմից ուսումնասիրվել են «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի 31-րդ հոդվածը, ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի Գործադիր կոմիտեի 1977 թվականի թիվ 7 (XXVIII) «Վտարում» և 1986 թվականի թիվ 44 (XXXVII) «Փախստականներին և ապաստան փնտրողների ձերբակալումը» եզրակացությունների[9] մեջ տրված կարգավորումները: Արդյունքում՝ արձանագրվել են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում միայն ապաստան հայցողները կարող են ձերբակալվել:

Ընդ որում, ձերբակալման ժամանակահատվածը պետք է լինի հնարավորինս կարճ, և ապաստան հայցողներին պետք է հնարավորություն տրվի բողոքարկել ձերբակալման մասին որոշումը:

Ընտանիքի միասնության սկզբունքը, չնայած ունի համընդհանուր բնույթ, սակայն փախստականների համար առանցքային է, քանի որ հաճախ երկիրը լքելիս նրանք ստիպված են լինում թողնել իրենց ընտանիքի անդամներին:

Ներկայումս ընտանիքի միասնության սկզբունքը պահանջում է պետություններից զերծ մնալ այնպիսի միջոցներից, որոնք կարող են բաժանել ընտանիքներին: Բացի այդ, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ընտանիքի բաժանված անդամներին միավորելու համար, երբ նրանք չեն կարող օգտվել ընտանիքի միասնության իրենց իրավունքից այլ երկրներում:

[9] reflaw.narod.ru/HTMLs/lows/inter/in_index.htm

Հեղինակն ընդգծել է, որ ընտանիքի վերամիավորմանն աջակցելը կնպաստի փախստականների պաշտպանությանը, կբարձրացնի նրանց զգացմունքային տոնուսը, ինչպես նաև հնարավորություն կտա բարելավել իրենց տնտեսական վիճակը:

Հատուկ սկզբունքների շարքին է դասվում նաև «փախստականների իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս միջազգային համերաշխության» սկզբունքը: Այս սկզբունքի իրագործման գործում կարևոր դեր ունի ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարը: Վերջինս ՄԱԿ-ի Գերագույն ասամբլեայի թույլտվությամբ կարող է դիմել կառավարություններին՝ միջոցներ տրամադրելու խնդրանքով, և պարտավոր է բաշխել փախստականներին օգնելու համար ստացված բոլոր հասարակական և մասնավոր միջոցները (ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրության 10-րդ հոդված):[10]

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է «Փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությունը և բաղկացած է երկու պարագրաֆից:

Գլխի առաջին՝ «Փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի ընդհանուր բնութագիրը և փախստականների իրավունքների պաշտպանությունը» պարագրաֆի քննարկման առարկա է դառնում փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը, փախստականների իրավունքների պաշտպանությունը: Բացի այդ, քննարկվել են «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի դրույթները՝ փախստականների իրավունքների և պարտականությունների շրջանակը որոշելու համար:

Այստեղ առանձնակի ուշադրության է դարձվել ինչպես փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությանը, այնպես էլ նրա կառուցվածքին: Դիտարկելով կարգավիճակի կառուցվածքի առնչությամբ տեսության մեջ արտահայտված տեսակետները, հեղինակը հանգել է նրան, որ փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակն իրենից ներկայացնում է կառուցվածք, որի մեջ են մտնում՝ իրավունքները, դրանց իրականացման երաշխիքները, ինչպես նաև պարտականությունները և պատասխանատվությունը:

Հեղինակն ամփոփել է «սահմանադրաիրավական կարգավիճակ» հասկացության և նրա կառուցվածքի վերաբերյալ իր եզրահանգումները և այն համադրել է ատենախոսության «Պաշտպանության ներկայացվող

[10] www.unhcr.ru

դրույթներից» երկրորդում առաջարկվելիք «փախստական» հասկացության սահմանման հետ: Արդյունքում՝ ատենախոսը փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացրել է «Պաշտպանության ներկայացվող դրույթներից» երրորդում:

Փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի ընդհանուր բնութագիրը տալուց զատ հեղինակն անդրադարձել է նաև այն երաշխիքներին, որոնցով ապահովվում է փախստականների իրավունքների պաշտպանությունը:

Մասնավորապես նշվել է, որ փախստականների իրավունքների պաշտպանությունը պետք է ապահովվի և երաշխավորվի թե՛ միջազգային, թե՛ ներպետական մեխանիզմներով:

Փախստականների իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մեխանիզմի մի մասը և գործում է երկու ուղղություններով: Առաջին՝ կոնվենցիաներ և հռչակագրեր մշակելով, որոնք ամրագրում են փախստականների իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունները, և երկրորդ՝ միջազգային մարմինների հսկողական գործունեությամբ՝ ուղղված նրան, որ պետությունները պահպանեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած պարտավորությունները:

Հեղինակն արձանագրել է, որ փախստականների պաշտպանությունն իրականացնող միջազգային մարմինների շարքում կենտրոնական տեղ է զբաղեցնում ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը: Ներկայացվել են նրա լիազորությունների շրջանակը, նպատակները և վերջինիս մանդատի հետ կապված որոշ խնդիրներ՝ ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի կանոնադրության բովանդակության և դրա պրակտիկայում կիրառման միջև հակասությունը, «փախստական» հասկացության համընդհանուր ունիվերսալ սահմանման բացակայությունը:

Ատենախոսը փաստել է, որ փախստականների իրավունքների պաշտպանության հարցում էական դեր է խաղում նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա) հսկողական մեխանիզմը: Դա պայմանավորված է նրանով, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումները նախադեպային նշանակություն ունեն նշված կոնվենցիայի անդամ բոլոր պետությունների համար:

Չնայած նրան, որ Եվրոպական կոնվենցիան չի պարունակում հատուկ նորմեր, որոնք պաշտպանում են փախստականներին, այնուամենայնիվ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան ձևավորվել է այնպես, որ նշված կոնվենցիայի որոշ նորմեր սկսեցին մեկնաբանվել որպես արգելող՝ կապված օտարերկրացիներին Եվրոպական կոնվենցիայի անդամ-պետությունների տարածքից վտարելու հետ: Մասնավորապես, դա վերաբերում է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածին («ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»):

Հեղինակը, մեջբերելով փախստականների իրավունքների պաշտպանության հետ կապված Եվրոպական դատարանի համապատասխան որոշումները, արձանագրել է, որ Եվրոպական դատարանն ընդունում է, որ որոշ դեպքերում անձին վտարելը կարող է խախտել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը: Մասնավորապես, երբ լուրջ հիմքեր կան կարծելու, որ անձը վտարվելու դեպքում կկանգնի նշված հոդվածով սահմանված վերաբերմունքի ենթարկվելու վտանգի առջև: Նման հանգամանքներում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը ենթադրում է պետությանը չվտարել անձին այն երկիր, որտեղ վերջինս կարժանանա հոդվածում նշված վերաբերմունքի:[11]

Ատենախոսն ընդգծել է նաև, որ փախստականների իրավունքների պաշտպանության համար հատուկ նշանակություն ունեն նաև Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը և 13-րդ հոդվածը:

Ապաստանի երկրում փախստականի իրավունքների պաշտպանության հիմնական ձևն է հանդիսանում իր խախտված իրավունքները վերականգնելու հայցով դատարան դիմելու իրավունքը: Փախստականների համար այս իրավունքը ունի կենսական նշանակություն, հատկապես այն դեպքերում, երբ լուծվում է նրանց վտարման հարցը:

Հեղինակն ուսումնասիրել է փախստականների և ապաստան հայցողների մասնակցությամբ 2009-2013թթ. ընթացքում քննված մի շարք վարչական գործեր:[12] Արդյունքում ատենախոսն եզրահանգել է, որ փախստականների և ապաստան հայցողների իրավական գիտելիքների ցածր աստիճանով է պայմանավորված այն, որ վերջիններս հաճախ չեն կարողանում վերականգնել

---

[11] Տե՛ս Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Soering v. The United Kingdom)*, 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 14038/88, Ախմեդն ընդդեմ Ավստրիայի *(Ahmed v. Austria)*, 1996 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, գանգատ թիվ 25964/94, Չախալն ընդդեմ Միացյալ Թագավորության *(Chahal v. The United Kingdom)*, 1996 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 22414/93 և այլն:

[12] www.datalex.am

իրենց ենթադրյալ խախտված իրավունքները: Դրա մասին են վկայում հետևյալ հանգամանքները.

1) Փախստականների կամ ապաստան հայցողների կողմից ներկայացված հայցերի (բողոքարկում են ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի, ինչպես նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված վարչական այլ ընթացակարգերի հետևանքով կայացված բացասական որոշումները) մերժման պատճառ է հանդիսանում այն, որ վերջիններս դատարան դիմելուց ներկայացնում են ոչ ճիշտ հայցի տեսակ: Օրինակ՝ փախստականները, դատարան դիմելով, ըստ էության վիճարկում են իրենց նկատմամբ կայացված վարչական ակտի հիմքում դրված հանգամանքների հավաստիությունը կամ կիրառված նորմի սխալ կիրառելիությունը կամ մեկնաբանությունը (վիճարկման հայց), սակայն ներկայացնում են վարչական ակտն առ ոչինչ ճանաչելու պահանջ:

2) Ապաստան հայցողները բողոքարկում են ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության գրությունները հասցեագրված իրենց, որոնք վարչական ակտ չեն հանդիսանում: Օրինակ՝ ապաստան հայցողները վիճարկում են ապաստան տրամադրելու համար կրկնական դիմումին ի պատասխան գրությունը, որը, ըստ նրանց, հանդիսանում է վարչական ակտ: Մինչդեռ, ՀՀ վարչական դատարանը, արձանագրելով որ հայցվորների կողմից ներկայացվել է իր բնույթով վիճարկման հայց, որով փաստորեն բացակայում է տվյալ հայցի առարկայի պարտադիր բաղադրիչ մասը կազմող՝ վիճարկվող վարչական ակտը, մերժում է ներկայացված հայցերը:

Փախստականների և ապաստան հայցողների դատական պաշտպանության իրավունքն արդյունավետ դարձնելու համար հեղինակն առաջարկել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել փաստաբանի պարտադիր մասնակցությունը վարչական դատարանում գործի քննությանը, եթե այնտեղ որպես կողմ հանդես են գալիս փախստականները կամ ապաստան հայցողները:

Գլխի երկրորդ՝ «Փախստականների իրավունքներն ու պարտականությունները Հայաստանի Հանրապետությունում» պարագրաֆում հետազոտվում է փախստականների իրավունքների ու պարտականությունների համակարգը: Արդյունքում՝ ձևակերպվել են գիտականորեն հիմնավորված առաջարկություններ՝ ուղղված առկա բացերը լրացնելուն և հակասությունների վերացմանը:

Հեղինակն առանձնակի ուշադրություն է դարձրել փախստականների բնակարանային խնդիրներին, նշելով, որ չնայած ՀՀ կառավարության և միջազգային կազմակերպությունների ջանքերին՝ փախստականների բնակարանային խնդիրները մնում են դեռ չլուծված: Մասնավորապես, փախստականների որոշ զանգված մինչև օրս նույնիսկ ապահովված չէ ժամանակավոր կացարանով: Կացարանով ապահովված փախստականների մեծ մասն էլ բնակվում են ծայրահեղ ոչ հիգիենիկ պայմաններում, քանի որ երկար տարիներ այդ տարածքներում վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել:

Բացի այդ, սեփականաշնորհման գործընթացի արդյունքում հաճախ ոտնահարվում են համապատասխան տարածքներում բնակվող փախստականների իրավունքներն ու օրինական շահերը: Դա պայմանավորված է նրանով, որ սեփականաշնորհումից հետո փախստականները վտարվում են իրենց կացարաններից նոր սեփականատերերի կողմից՝ առանց որևէ փոխհատուցում կամ կացարան տրամադրելու:

Կարելի է արձանագրել, որ բնակարանային հիմնախնդրի առկայությունն է նաև այն հիմնական պատճառներից մեկը, որ Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստականների մեծամասնությունը՝ լինելով ազգությամբ հայ, չի կարողանում լիարժեքորեն ինտեգրվել մեր հասարակության մեջ:

Ատենախոսության երրորդ գլուխը կրում է «Փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչումը և դադարեցումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությունը և բաղկացած է երկու պարագրաֆից:

Գլխի առաջին՝ «Փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչումը» պարագրաֆը նվիրված է փախստականի ճանաչման ընթացակարգի ուսումնասիրությանը: Այստեղ քննարկվում են նաև փախստականի ճանաչման բացառման և ապաստան տրամադրելու մերժման հիմքերը:

Փախստականի ճանաչումը հանդիսանում է պաշտոնական հաստատումն այն բանի, որ անձը միջազգային պաշտպանության կամ ապաստանի կարիք ունի:

Փախստականի կարգավիճակը ճանաչելիս պետությունները պետք է առաջնորդվեն այն նյութական նորմերով, որոնցում սահմանված դրույթների առկայության կամ բացակայության պայմաններում անձը կարող է ճանաչվել

փախստական, ինչպես նաև պետք է պահպանեն փախստականի ճանաչման ընթացակարգերը:

Անձը «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի իմաստով հանդիսանում է փախստական, երբ նա համապատասխանում է սահմանման մեջ պարունակվող չափանիշներին: Պետությունը, փախստականի փաստացի վիճակում գտնվող անձին պաշտոնապես ճանաչելով, նրան տալիս է փախստականի կարգավիճակ:

Այնուամենայնիվ միայն այդ չափանիշներին համապատասխանելը դեռևս բավարար չէ, որ անձը ճանաչվի որպես փախստական:

Մասնավորապես, ուսումնասիրվել են «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի D, E և F կետերում և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում սահմանված այն հանգամանքները, որոնք բացառում են անձին որպես փախստական ճանաչելը: Հեղինակն արձանագրել է, որ ցանկացած պետություն պետք է ընդունի որոշում «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում և 1967 թվականի Արձանագրության մեջ նշված չափանիշներին համապատասխանող ապաստան հայցող անձին փախստական ճանաչելու մասին՝ իր գործող օրենսդրությանը համապատասխան, եթե վերը նշված դրույթներով սահմանված հիմքերը բացակայում են:

Հիմնական պահանջները, որոնց պետք է համապատասխանեն փախստականի ճանաչման և ապաստան տրամադրելու ընթացակարգերը, սահմանված են ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի Գործադիր կոմիտեի 1977 թվականի թիվ 8 (XXXVIII) «Փախստականի կարգավիճակի ճանաչումը» եզրակացության մեջ:[13] Հեղինակն ուսումնասիրելով նշված եզրակացությունը, ինչպես նաև «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի դրույթները, եզրահանգել է, որ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով սահմանված փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչման և ապաստանի տրամադրման ընթացակարգերը համապատաս-խանում են միջազգային պահանջներին:

Քննարկվել է նաև ապաստանի հայցի հիմքում ընկած հանգամանքների ապացուցման պարտականության հետ կապված հիմնախնդիրը: Հեղինակն ուսումնասիրելով «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը և

[13] reflaw.narod.ru/HTMLs/lows/inter/in_index.htm

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը[14] եզրահանգել է, որ ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը չպետք է սահմանափակվի զուտ վարույթի մասնակցի ներկայացրած ապացույցներով: Հաշվի առնելով վարչարարության իրականացման բազմակողմանիության, լրիվության, օբյեկտիվության չափանիշները, հավաստիության կանխավարկածը և վարչական մարմինների փոխօգնության պարտականությունը՝ նշված ծառայությունը պետք է գործադրի ջանքեր վարույթի առարկային առնչվող բոլոր հարցերի, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքների պարզման համար:

Ատենախոսն անդրադարձել է նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստանի տրամադրման ընթացակարգի ժամկետներին:

Վերլուծելով «Փախստականների և ապաստանի մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքները՝ հեղինակը գտել է, որ անհրաժեշտ է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում որպես ապաստանի տրամադրման ընթացակարգի ժամկետ սահմանել «ողջամիտ ժամկետը»: Նման պայմաններում իրավասու մարմինները չեն ընկնի ժամկետային շրջանակների մեջ, և պայմանավորված կոնկրետ գործի առանձնահատկություններով, կկիրառեն ապաստանի տրամադրման ընթացակարգի անհրաժեշտ համապատասխան կարճ կամ երկար ժամկետներ:

Միաժամանակ օրենքով անհրաժեշտ է սահմանել, որ ապաստանի տրամադրման ընթացակարգի «ողջամիտ ժամկետի» խախտման փաստը հաստատվելու դեպքում անձը դատական կարգով կճանաչվի փախստական և նրան կտրամադրվի ապաստան Հայաստանի Հանրապետությունում:

Գլխի երկրորդ՝ «Փախստականի սահմանադրահիրավական կարգավիճակի ճանաչումը դադարեցնելը» պարագրաֆում հետազոտվում են փախստականների սահմանադրահիրավական կարգավիճակը դադարեցնելու հիմքերը:

Այդ կարգավիճակի դադարեցման և համապատասխան հիմքերի սահմանման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ միջազգային պաշտպանություն չպետք է տրամադրվի, եթե դրա անհրաժեշտությունը այլևս չկա կամ այն արդարացված չէ: Փախստականի սահմանադրահիրավական կարգավիճակը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ նա չի ընկնում դադարեցման հիմքերից որևէ մեկի տակ: Հեղինակի կողմից հետազոտված այդ հիմքերը սահմանված են «Փախստականների

[14] ՀՀՊՏ 2004.03.31/18 (317)

կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի C հոդվածում և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում:

Փախստականների մասնակցությամբ 2009-2013թթ. ընթացքում քննված վարչական գործերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը պարզել է, որ հաճախ փախստականները մասնակից չեն դարձվում իրենց՝ փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակը դադարեցնելու համար ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթին:

Ատենախոսը փաստել է, որ իրավաչափ որոշում ընդունելու համար հարկավոր է բացահայտել և գնահատել գործին առնչվող բոլոր հանգամանքները (համակողմանիության և լրիվության ապահովում): Հետևաբար, անհրաժեշտ է, որպեսզի մինչև գործով որոշում ընդունելը վարչական մարմինն իրազեկ դառնա գործի ելքով շահագրգիռ բոլոր անձանց կարծիքներին, հատկապես՝ եթե ընդունվելու է միջամտող վարչական ակտ: Ըստ այդմ, վարչական մարմինը պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռել արտահայտվելու վարչական վարույթում քննվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Վերլուծելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասը՝ հեղինակն եզրահանգել է, որ օրենսդիրը, չի նախատեսել եռօրյա ժամկետից պակաս ժամկետում վարույթի տևողության պարագայում մասնակցին ծանուցելու պարտականություն: Հետևաբար, ըստ գործող օրենսդրության, մնացած բոլոր դեպքերում վարչական մարմինը վարույթի ընթացքում պարտավոր է լսել վարույթի մասնակիցներին, որն էլ ապահովվում է պատշաճ ծանուցմամբ, քանի որ առանց ծանուցման՝ մասնակիցը չի կարող տեղեկացված լինել վարույթի մասին և մասնակցել լսումների:

Այսինքն՝ վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքի խախտում առկա չի լինում այն պարագայում, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից պակաս է:

Հեղինակի կարծիքով, հաշվի առնելով փախստականների սահմանադրաիրավական կարգավիճակի առանձնահատկությունները, վերը նշված սահմանափակումը չպետք է կիրառվի փախստականների նկատմամբ: Մասնավորապես, վերջիններս, որպես խոցելի խումբ, իրենց՝ փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակը դադարեցնելու համար հարուցված վարչական վարույթին պետք է հնարավորություն ունենան իրականացնելու լսված լինելու իրենց իրավունքը: Հակառակ դեպքում կխախտվի

փախստականների ՀՀ Սահմանադրությամբ և Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը:

Ընդ որում, ատենախոսը հիմնավորել է, որ իր դիրքորոշումը չի հակասում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին: Մասնավորապես մատնանշվել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է լրացուցիչ լսումների մասին, որի պարագայում «լրացուցիչ» բառն արդեն իսկ խոսում է լսումների անցկացման պարտադիր լինելու մասին: Նույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է վարչական մարմնի արագ գործելու պարտականությանը, որը, սակայն, չի պարունակում որևէ դրույթ, ինչը կբացառեր լսումների պարտադիր լինելու հանգամանքը:

Մեջբերելով նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ ՍԴՈ-1054 որոշումը,[15] հեղինակն եզրահանգել է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով անհրաժեշտ է սահմանել, որ փախստականներին պետք է հնարավորություն տրվի մասնակցել իրենց սահմանադրաիրավական կարգավիճակը դադարեցնելու համար հարուցված վարչական վարույթին և իրականացնել լսված լինելու իրենց իրավունքը:

Ատենախոսության ամփոփման մեջ հեղինակը վերոգրյալից զատ արել է ներքոհիշյալ եզրահանգումները, բերել համապատասխան առաջարկություններ:

1. Ատենախոսության շրջանակներում իրականացված «փախստականի կարգավիճակ» հասկացության կայացման և զարգացման գործընթացի հետազոտությունը վկայում է, որ մոտ մեկ դարյա ժամկետում «փախստական» հասկացությունը կրել է էական փոփոխություններ: Մասնավորապես, եթե նախկինում անձին փախստականի կարգավիճակ տրվում էր որոշակի խմբի պատկանելու, ազգության հիմքերով, ապա ներկայումս ոչ միայն հստակ սահմանված են այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում միայն անձը ճանաչվում է փախստական, այլև նախատեսված է փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչման անհատական ընթացակարգ:

2. «Հետապնդում» տերմինի համընդհանուր ընդունված սահմանում գոյություն չունի, որի արդյունքում դրա մեկնաբանման համար օգտագործվում

[15] www.concourt.am

են տարբեր մոտեցումներ: Հեղինակի կարծիքով, առավել ընդունելի է այն մոտեցումը, ըստ որի «հետապնդում» տերմինը կապվում է փախստականի նկատմամբ կատարված այն արարքների հետ, որոնք արգելված են միջազգային իրավունքով, մասնավորապես, մարդու իրավունքներին վերաբերող նորմերով: Ընդ որում, «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածից կարելի է եզրակացնել, որ ռասայի, կրոնի, ազգության, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով կյանքի կամ ազատության նկատմամբ սպառնալիքը միշտ համարվում է հետապնդում:

3. «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի անգլերեն տեքստում օգտագործված «nationality» բառը պետք է մեկնաբանել «ազգային պատկանելության» իմաստով: Դա պայմանավորված է նրանով, որ «ազգային» հատկանիշն իր մեջ ներառում է ազգային (էթնիկական, լեզվական) փոքրամասնությունները, որոնց նկատմամբ՝ միայն այդպիսի փոքրամասնությանը պատկանելու ուժով, կարող է ձևավորվել թշնամական վերաբերմունք և կիրառվել համապատասխան ներգործության միջոցներ: Նման պայմաններում միայն այդպիսի փոքրամասնությանը պատկանելը կարող է առաջացնել հետապնդումների ենթարկվելու հիմնավորված երկյուղ:

4. Ներկայումս չկա «սոցիալական խումբ» հասկացության սահմանման համապարփակ և համոզիչ իրավական մոտեցում: Ընդհանրապես կոնկրետ սոցիալական խմբի մոտ առկա է լինում միավորող, չփոփոխվող հատկանիշ (հատկանիշներ), որը բավարար է այդ խմբի անդամներին ինքնանույնականացվելու համար, ինչպես նաև բավարար է նրա համար, որ այդ «սոցիալական խումբը» նույնականացնի այն անձը, ով իրականացնում է հետապնդումը:

5. Փախստականներին ապօրինի մուտքի կամ ներկայության դեպքում կարելի է ձերբակալել միայն բացառիկ դեպքում: Այսինքն՝ որպես կանոն, պետք է առաջին հերթին ձեռնարկվեն այլընտրանքային միջոցներ (օրինակ՝ կարող է պահանջվել, որ փախստականը գրանցվելու համար պարբերաբար ներկայանա միգրացիոն ծառայություն կամ ոստիկանություն, երաշխավորությունը կամ փախստականը կարող է տեղավորվել կոնկրետ հասցեում կամ վայրում և պարտավորեցվել՝ առանց համապատասխան թույլտվության չփոխել այն և այլն), բացառությամբ այն դեպքերի, երբ հաստատված է այդ միջոցների կիրառման անարդյունավետությունը կոնկրետ անձի նկատմամբ: Անձը կարող է ձերբակալվել միայն բոլոր հնարավոր այլընտրանքային միջոցները կիրառելու հնարավորության քննարկումից հետո:

6. Փախստականի սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչումը պետք է մերժվի, եթե նախքան Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելը՝ անձը կատարել է ոչ քաղաքական բնույթի այնպիսի հանցագործություն, որը կհամապատասխանի ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների դասակարգման մեջ ընդգրկված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններին:

7. «Փախստականների իրավական կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիան որպես փախստականի ճանաչումը բացառող հանգամանք նշում է ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող արարք կատարելը: Ատենախոսության մեջ հեղինակը համաձայնվում է ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի և փախստականների խնդիրներով զբաղվող մի շարք գիտնականների կողմից հիմնավորված այն մոտեցմանը, որ այդ դրույթը կիրառելի է միայն այն անձի նկատմամբ, ով զբաղեցնում է բավականին բարձր դիրք ՄԱԿ-ի անդամ պետությունում: Միայն այդպիսի դիրք գրավող անձի գործողությունները կարող են հանգեցնել պետության կողմից ՄԱԿ-ի սկզբունքների խախտմանը:

8. Փախստականի ճանաչումը դադարեցնելու վերաբերյալ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում ամրագրված դրույթները նույնական են «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում ամրագրված դրույթներին: Բացառություն է հանդիսանում միայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում ամրագրված դադարեցման այնպիսի հիմք՝ ինչպիսին է «անձնական պատճառներով այլևս չի ցանկանում համարվել փախստական», որը նախատեսված չէ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված նորմի հետ կապված առաջանում են բազմաթիվ հարցեր և այն գործնականում չի կիրառվել, դժվար է այդ նորմին որևէ գնահատական տալ:

9. «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի C հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի և «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դադարեցման հիմքերում նշված «հանգամանքներ» հասկացությունը նշանակում է, որ անձի քաղաքացիության կամ նախկին բնակության երկրում տեղի են ունեցել այնպիսի հաստատուն փոփոխություններ, որոնք անհիմն են դարձնում ամեն տեսակ հետապնդման ենթարկվելու երկյուղները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈԼԱԾ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝

1. Նիկողոսյան Գ., «Փախստական» հասկացության ձևավորումը և զարգացումը //Դատական իշխանություն, թիվ 12 (161), Երևան, 2012, էջեր 42-51:

2. Նիկողոսյան Գ., Փախստականների իրավական կարգավիճակի սկզբունքները //Դատական իշխանություն, թիվ 2 (163), Երևան, 2013, էջեր 16-24:

3. Նիկողոսյան Գ., Փախստականների սոցիալական ապահովության և անվճար բժշկական օգնության իրավունքները //Դատական իշխանություն, թիվ 3 (164), Երևան, 2013, էջեր 2-8:

4. Նիկողոսյան Գ., Փախստականների իրավունքների պաշտպանությունը //Դատական իշխանություն, թիվ 4 (165), Երևան, 2013, էջեր 12-20:

Гор Вачаганович Никогосян

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОГО СТАТУСА БЕЖЕНЦЕВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

РЕЗЮМЕ

Проблемы лиц, вынужденно покинувших постоянное место проживания или государство гражданство и ищущих новое место проживания, были и остаются предметом повышенного внимания государств и одной из задач, требующих эффективного решения. Актуальность темы обусловлена тем, что увеличение количества беженцев в мире создает ряд проблем, которые предполагают необходимость их теоретического, научного осмысления, так и осуществления законодательных изменений направленные на укрепления конституционно-правового статуса беженца. В частности, беженцы из Азербайджана, Сирии и других стран в разное время прибывшие и нашедшие убежище в Армении, имеют ряд проблем такие, как квартирный вопрос и другие социально-экономические проблемы /высокая степень безработицы, низкие доходы и т.д./, низкая степень осведомленности о своих правах и т.д. Укрепление конституционно-правового статуса беженцев и улучшение их фактического положения требует четкого определения и решения ряда теоретических задач, в частности, понятие и содержание концтитуционно-правового статуса беженцев требует новой трактовки и дополнения.

Цель диссертационного исследования – всестороннее изучение норм, укрепляющих статус беженцев в международном и отечественном праве, а именно, поднять существующие противоречия, неопределенности, пробелы и разработать варианты их разрешения.

Изучая точку зрения о разделении на этапы процесса развития законодательства о беженцах в юридической литературе, сделана попытка по-новому представить развитие законодательства о беженцах, разделяя его соответственно на четыре этапа. Одновременно, после всестороннего изучения и анализа существующих определений понятия “беженец” в международных и региональных документах, принятых в разное время в диссертации предложено новое определение понятия “беженец” для применения в международном и национальном праве.

Кроме того в диссертации особое внимание уделено понятию и структуре конституционно-правового статуса беженца. Автор обосновывает, что конституционно-правовой статус беженца имеет сложную структуру и выделяет

его следующие составляющие элементы: права, гарантии их осуществления, а также обязанности и ответственность.

В диссертации представлены не только теоретические, но и практические предложения. В частности, предложено законом РА “Об основах администрирования и административного производства” определить, что беженцам, как наиболее уязвимой группе, во всех случаях должна быть предоставлена возможность участвовать в административном производстве, возбужденном для прекращения их конституционно-правового статуса и осуществить их право быть услышанным вне зависимости от длительности периода с момента возбуждения административного производства до принятия административного акта.

Одновременно, для улучшения эффективности права судебной защиты беженцев, предложено “Административно-процессуальным” кодексом РА определить обязательное участие адвоката в административном суде при рассмотрении дела, если в качестве одной из сторон выступает подавший прошение на убежище или беженец.

Помимо этого, законом РА “О беженцах и убежище” предложено установить “разумный срок” для процесса предоставления убежища. В данных обстоятельствах правомочные органы не попадут во временные рамки и, в зависимости от особенностей конкретного дела, будут применять соответствующие необходимые краткие или длинные сроки процесса предоставления убежища.

Одновременно законом необходимо определить, что при условии подтверждения факта о нарушении “разумного срока” процесса предоставления убежища лицо будет признано беженцем в судебном порядке и ему будет предоставлено убежище в Республике Армения.

Также предложено дополнить данный закон нормой, согласно которой, в отдельных случаях беженцам будет предоставлена возможность представления заявления о продлении срока действия конвенционно-дорожного документа до истечения срока действия данного документа.

Диссертационная работа имеет важное теоретическое и практическое значение. Основные теоретические и практические выводы и предложения могут быть использованы в правотворческой и правоприменительной практике, а также в учебном процессе.

Gor Vachagan (father's name) Nikoghosyan

THE PROBLEMS OF THE CONSTITUTIONAL-LEGAL STATUS OF THE REFUGEES IN THE REPUBLIC OF ARMENIA

RESUME

The problems of the persons who were forced to leave their permanent residence or a country of citizenship and are looking for new place of residence, was and still remains one of the issues of the greater attention of the state, that demands effective solution. The relevance of the topic is due to the fact that the increase in the number of refugees raises new challenges which require not only theoretical and scientific study of these tasks, but also the necessity of the need for legislative changes. In particular, refugees from Azerbaijan , Syria and other countries at various times have a number of problems such as housing problem and other social economic issues (high unemployment, low income etc.) low level of awareness of their rights and etc. The consolidation of constitutional-legal status of refugees and their de facto situation demands strict definition and solution of a number of theoretical tasks, in particular, the notion and contents of constitutional-legal status of the refugees demands new interpretation and addition.

The purpose of the research of the thesis is the comprehensive examination of the rules defining the status of the refugees in international and domestic law, namely raise the existing contradictions, uncertainty and develop options and solutions.

Studying the point of view on the division into stages of the development of refugee law in the legal literature there is made an attempt to represent the development of refugee law, dividing it into four stages, respectively. At the same time after thorough study and analysis of the existing definitions of the concept of <<refugee>> in the international and regional law, the author proposed a new definition of the concept of <<refugee>>.

Special attention is given to the concept and structure constitutional-legal status of the refugee. The author substantiate that the constitutional-legal status of the refugee has a complex system and defines its following constituent elements: the rights and guarantees of their implementation as well as their duties and responsibilities.

Besides, there were studied principles of constitutionally-legal status of refugees, a volume of rights and duties of refugees in our country, international and internal mechanisms of protection of the rights of refugees, position about

recognition and stopping of the constitutionally-legal status of refugees and other questions related to them.

As it was already mentioned, not only theoretical but also practical suggestions were presented in the thesis. Mainly it was suggested to define, by the law of ‹‹Administration and administrative proceedings›, that the refugees, as the most vulnerable group, in all cases must be given an opportunity to take part in administrative proceedings initiated to terminate their constitutional-legal status and to exercise their right to be heard, no matter of the length of the period of time from the beginning of the administrative proceedings till the adoption of the administrative act.

In order to improve the effectiveness of judicial protection of the rights of the refugees, it was suggested by the code of <<Administrative procedure>> of the Republic of Armenia the compulsory participation of the lawyer in the Administrative Court during the consideration of the investigated case if one of the parties is a refugee or has filed a petition for asylum.

Besides, it is suggested to install a <<reasonable time>> for the asylum process by the the law of <<Refugees and asylum>>.

In the circumstances, competent bodies won't get caught in a time frame, and depending on the specifics of a particular case, will apply the necessary short or long term of the asylum process.

At the same time it must be defined by the law that in case of the confirmation of the violation of the <<reasonable time>> of the asylum process, the right for the asylum in the Republic of Armenia will be given to him by judicial procedure.

It is also suggested to complement this law by the norm, according to which in separate cases, an opportunity to submit an application for the extension of the validity period of konventional-travelling document before the expiration of the document.

The dissertation has important theoretical and practical significance. The basic theoretical and practical conclusions and recommendations can be used in law enforcement practice, as well as in the educational process.